

մնալ երեւան բերուող վաւերագրի նիւթերի հրապարակումից: Մեր պատկերացմամբ՝ նման աշխատանքները գուզընթացաբար պիտի կատարուեն՝ վերջնական նպատակ ունենալով, ինչպէս արդէն ասուեց, «Դիւանների» հատորաւոր հրատարակութիւնը:

Վերջին տարիներին ակադ. Կ. Կեկելի-ձէի անուան Ձեռագրերի ինստիտուտում հայ-վրացական բանասիրական պրպատմներ կատարելիս ուշադրութեան առայ Armt. 118 համարակալմամբ պահպանուող վեց վաւերագիր ներկայացնող միաւորը: Պատմական նոյն միջավայրին՝ Լօռէին վերաբերող առուծախի փաստագրումներ են՝ կազմուած նման գործարքները ներկայացնող կողմերի հաւաստումներով: Վաւերագրերի բնագրերի հետ միատեղ նրանց նորօրեայ ընդօրինակութիւններն են՝ տեղտեղ անյաջող ընթերցումներով:

1ր հջում եղած վրացերէն ծանօթագրման համաձայն՝ «ձեռք է բերուած նկարիչ Նաբաթով[ից]», բայց թէ ո՞վ է այդ նա-

* * *

N 1

Կաման Աստուծոյ եւ Դուկասի որդի Սարգիսս եւ իմ որդի Դաւիթս մեր կամաւ եւ մեր յօժար սրախ ծախեցինք Ակնափողկայ մեծ Արաքունու տակի ձորի հողն ի վերայ Մուրադի որդոցն՝ Տէր Առաքելին եւ Վարդանին եւ ձեր որդոցն. մէկ ձէրն գնում ա Շնածորկա բողազն, մէկ ձէրն գալիս ա դէպ Ակնափողկա նէրքի հողերն, որ է Աքօրվա ճանրի վերի կուռն՝ դէպ մէծ Արաքունին:

Հախն առանք մեր կարեացն արարինք. օչ օվ դաւի շունի ոչ իմոց եւ ոչ օտարաց. օվ դաւի անէ դաւին հետ մեզ լինի:

Վկայ աս բանիս [Աստուած է եւ] պարօն Եարալին, Ասլանանց կլանէսն, Դարբնանց Սաքին, Անտօնն, Կիրակոսն:

Ես՝ Սմպատանց արեղէ[ս] գրեցի եւ վկայ եմ: Աստուած վկայ:

բաթովն ու ինչո՞ւ են վաւերագրերը նրամօտ գտնուել՝ դժուար է ասել: Մեզանից առաջ հայագէտ մէկը թերթել է միաւորը եւ աղատ էջին հայերէն գրել. «Կալուածագրեր, 6 հատ, N 118 Ա-Զ»:

Բնագրերը խոնացած են, տեղտեղ վնասուած: Դատելով տեղանքը ներկայացնող միկրոտոպոնիմներից՝ յիշատակուող որոշ անձանց կրկնութիւնից եւ, մանաւանդ, գրչութեան առանձնայատկութիւններից՝ հիմնականում նոյն բնակավայրի մերձաւորութեամբ գտնուող հողակտորների մասին է խօսք գնում՝ ընդգրկելով երկու տասնամեակ՝ 1718-1741 թուականները: Հողակտորների չափը սահմանուած է տեղանքի նշումով: Իսկ գինը չի արձանագրուած: Կարեւոր է գործարքի վերջնական լինելու պարագան: Հնարաւոր է՝ յիշատակուող տոհմերն ու տեղանունները այսօր էլ ճանաչելի լինեն Ալավերդու կամ Ստեփանաւանի շրջանների բնակչութեանը:

Ուշագրաւ են Լօռու խօսուածքին յատուկ բարբառային արտայայտութիւնները:

Գրեցաւ ՌճՂ թվին (1721) Ունվարի ժԱ.ն:

N 2

/2r/ Կաման Աստուծոյ եւ ողորմութեամբն, ես՝ էլամանց Փրիտօնս, իմ ախպէր Ասլանս մեր կամով եւ օժար սրախ ծախեցինք Համձանց ձապկէայ հողն ի վերայ Մուրադի որդի Տէր Առաքելին, իր ախպէր Վարդանին, հախն առինք մեր կարեցն արինք, այլ օչում բան չկայ ոչ իմոց եւ ոչ օտարաց. օվ որ դավի անէ դավին հետ Փրիտօնիս լինի:

Վկայ այս բանիս եւ Ասլանց կլանէս վկայ:

Ես Փրճօլանց Անտօնս վկայ: Ես՝ Սաղունթանց Վարդանս վկայ:

Ես՝ Տէր Գրեգոր հապեղէս գրեցի, վկայ եմ: Թվին ՌճՂ, (1741) Յունվարի մուսն:

N 3

Կաման Աստուծոյ ամենակալին ես՝ Գալուստի որդի Ալիխանս իմ կամաւ եւ իմ յօժար սրախի ետուլ՝ մեծ Շահառի տակի Ակնափողկա հողն ծախեցի իմ [վայր]* Մուրադի որդոցն Տէր Առաքելին եւ Վարդանին՝ եւ ձեր որդոցն, որ է մեծ գետի վէրի կուռն. մէկ ձէրն գնում ա Մեծ քարկապն, մէկ ձէրն գնում ա ձեր Ղանտուրի (?) երակ(?) հողի ձերն, որ է Ակնափողկայ բարակ փոսի տակն: Հախն առի իմ կարեացն արարի. օչ ով դաւի շունի ոչ իմոց եւ ոչ օտարաց: Օվ դաւի անէ ճուղապի տվօղն եւ լինի: Օվ ետ ու առաջ տայ ԳճԺԸ. հայրապետացն նգովեալ եղիցի:

Վկայ այս բանիս բարօն Եարալին, Ասլանանց կլանէսն, Դուկասանց Աւետիսն, Դարբնանց Սաքին, Գրճօլանց Անտօնն, Յետիզանց Գաւօն, էլամանց Մէրտաղն (?), Սօրեկանց Թամազն էլիպարի:

Ես Սմպատանց արեղէս գրեցի, Աստուած վկայ: Գրեցաւ ՌճԿԷ (1718) թվին, Մայիսի Ե.ին:

N 4

Կաման Աստուծոյ եւ Սաքուլանց Գալուստի որդի Ալիխանս իմ կամաւ եւ իմ յօժար սրախ ծախեցի իմ փայի Գուլբեբանցի հողն իր ճալօվն, իր վերի ճոթերովն եւ իր ամենայն բոլոր սահմանօք եւ գեղումն Ջորի ճանապարհի քարազլիսի հողն, Սաղու տափի ցաքուտ հողն ծախեցի ի վերայ Մուրադի որդի Տէր յԱռաքելին եւ իր ախպէր Վարդանին: Հախն առայ իմ կարեացն արարի, այլ ոչ ում բան չլի ոչ իմոց եւ ոչ օտարաց եւ ոչ իմ յազգականաց: Ով ոք այլ դաւի անէ [կամ] յետոյ յառաջ տայ, դաւին հետ ինձ լինի, եւ ծառ[այ] եւ բեշար լինիմ... ման...

N 5

Կաման Աստուծոյ ամենակալին ես՝ Սաքուլի որդի Կիրակոսս, իմ կամաւ եւ իմ յօժար սրախ ծախեցի Ակնափողկա Մեծ շահառի վերի

կոան բօլոր հողն իւր քոլօվն, իւր մարաքօվն ի վերայ Մուրադի որդոցն՝ Տէր Առաքելին եւ Վարդանին եւ [իւր] որդոցն. հախն առի եւ իմ կարեացն արարի. որ մէկ ձէրն գնում ա Մեծ քարկապն, մէկ ձէրն գնում ա Ակնափողկա բարած (?) փոսն: Օչ ով [դաւի] շունի ոչ իմոց եւ ոչ օտարաց. օվ դաւի անէ ճուղապի տվօղն եւ լինի: Օվ ետու առաջ տայ ԳճԺԸ. հայրապետացն նգովեալ եղիցի:

Վկայ այս բանիս պարօն Եարալին, Սօրիկանց Վիասըն, էլիպարն, Թամազն, Ասլանանց էվանէսն, Անտօնն, Սաքին, Աւետիսն, էրիզանց Դաւօն:

Ես Սմպատանց արեղէս գրեցի եւ վկայ եմ, Աստուած վկայ: ՌճԿԺ (1720) թվին, Մարտի Ե.ին:

N 6

[Կաման Աստուծոյ եւ ողորմութեամբն եւ կումեանց Փրիտօնս եւ իմ ախպէր Ասլանս մեր կամով եւ յօժար սրախ ծախեցինք մեր պատշարի հողն ի վերայ Մուրադի որդի Տէր Առաքելին եւ իր ախպէր Վարդանին, եւս մեր կալի ու մարաքի կէսն եւս ծախեցինք ի վերայ վերոյ գրեալ Տէր Առաքելին եւ իւր ախպէր Վարդանին եւ իւրեանց որդոցն]:

Հախն առանք մեր կարեացն արինք: Այլ ոչ ում բան չկա՝ ոչ իմ ազկականաց եւ ա[յլ]ոց բան չկայ: Հախն առանք մեր Քարազլիսի հողն, մեր կալի ու մարաքի կէսն տվինք:

Վկայ այս բանիս [վնասուած է երկու բառատեղ] Թամազի տղայ Շիօշն, Սօրիկանց Ասլանի տղայ Ղարայխանն, Ասլանանց էվանէս, Վէրմիշանց Տէր Պետրոս, Վանքի լուսարար Տէր Ա[ն]դրիաս, Բէրէքանց Փարսազանի տղայ Բախտես, Հախնազարանց էլիգբարս:

Ես տիրացու Պետրոսս գրեցի, վկայ եմ:

[ի թվին ՌճԶԸ-ին (1739) Մայիս ամսու ժէ-ին գրեցաւ]:

* Գուցէ՛ խայի կամ նոյնիսկ՝ քոյր:

